Արձանագրություն N 2
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան05.03.2020թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մելիքսեթյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Աղաբեկյան /գնահատող/, Ե. Բազեյան /գնահատող/, Հ. Հակոբյան /բացող/, Վ. Մելիտոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/33» ծածկագրով գնման ընթացակարգինհայտերիբացմանմասին

(Ա. Մելիքսեթյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2020 թվականի մարտի 5-ին, ժամը 11:00-ին,** Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/33»ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Մելիքսեթյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ ՍՊԸ
2	«ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3.Մասնակիցներիկողմիցներկայացվածգնայինառաջարկներիմասին

(Ա. Մելիքսեթյան)

3.1 Գնմանընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկներ:

Հ/Հ	Գնմանառարկայիանվանումը	Նախահաշվային գներ	Մասնակիցներիանվանումները					
			ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ ՍՊԸ			«ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ		
			Ինքնարժեք	Շահույթ	Ընդհանուրգին ԱԱՀ չիվճարում	Ինքնարժեք	Շահույթ	Ընդհանուրգին ԱԱՀ չիվճարում
1	նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների	350000	1400000	600000	2000000	2150000	430000	2580000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ, բացառությամբ «ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի: Մասնավորապես «ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկում տառերով ինքնարժեքի և շահույթի հանրագումարը չի համապատասխանումտառերով ներկայացրած ընդհանուր գնին, իսկ թվերով ինքնարժեքի և շահույթի հանրագումարը չի համապատասխանումտառերով ներկայացրած ընդհանուր գնին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 2-րդ մասի համաձայնմասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

ՈՒստի հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 2-րդ մասը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԳԼՈԲԱԼ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Ընդունվելէորոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներբացվածյուրաքանչյուրհայտումպահանջվողփաստաթղթերիառկայությանև սահմանվածպահանջներինդրանցհամապատասխանությանմասին

(Ա. Մելիքսեթյան)

4.1 Մասնակիցներիկողմիցներկայացվածհայտերումառկաենհրավերովպահանջվողբոլորփաստաթղթերընդրանքհամապատասխանումենհրավերովսահմանվածպայմաններին:

Ընդունվելէորոշում՝կողմ5, դեմ 0:

5. Բանակցությունների անցկացման անհրաժեշտության մասին

(Ա. Մելիքսեթյան)

5.1 Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով << կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ **եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը** կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա» որոշեց նիստը կասեցնել է, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

5.2 Քանի որ ԿԱՊԻՏԱԼ ՓՐՈՋԵՔԹ ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է մեր կողմից սահմանված գինը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեցգնման ընթացակարգը ընդհատել մինչև բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստ, և ծանուցել մասնակցին գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների անցկացման մասին, որը տեղի կունենա **10.03.2020թ. ժամը 11:30**-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **10.03.2020թ. ժամը 11:30**-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 321 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Մելիքսեթյան

Անդամներ՝ _____ Վ. Աղաբեկյան

_____ Ե. Բազեյան

_____ Հ. Հակոբյան

_____ Վ. Միլիտոսյան

Քարտուղար՝ _____ Ս. Եղիազարյան